րան սէրկի սալթանաթ պույրուլտու-սընը , վէ Միսըրըն անալարընըզ վէ պապալարընըզտան զիյատէ հուզուր վէ րահաթընը թէքրար՝ Միսըր խըտիւն կիւզէլ նամ՝ գազանտըրմաղա չալըշ-մագտա պուլունան միւշար իլէյհ փաթրիգ էֆէնտի հազրէթլէրինին էմրը Ներսէսի պազգատընա խուլուսը գալպ իլէ տուա խտիւպ , ավագիպլէ նիզին մէմնունիյէթինի ձէնապ Հագգ —թէ—ալէմին հազրէթլէրինտէն թէ-մէննի խըլըն :

Խըլթէ ձիւմլէնիզտէ մահզուզիյէթ-լէ կէօրիւլիւմ՝ տատը խըլթիտաս վէձհիլէ , պիր լութֆինի թիւտալը պու-րատա պուլունտուղան աձիպանէ , է-լիմ՝ տէյալիձէ , արատըգ արալըգ , ֆէն-նի քիմյապէթի կէօսթէրմէկի թէշահ-հիւտ իլէ՝ իշըրիւսինի տիրայէթ զա-թիյէ վէ ֆէթանէթի միւսէլլէմ վէ միւհթէրէմլէրինիզէ հալալէ իլէ էս-թիֆա էյլէտիմ :

---

## ԽՕՍՔ ԱՐՏԱՍԱՆԵԱԼ

# Ի ՀԱՆԴԻՍԻ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

### ԴՐՈՒԱԳ. Ա.

Յ. — Մանկո՛ւնք Հայոց , ծնունդք փառաց
Փառք ցեղանան ձերոց յաջաց .
Աչք հաճոյից զեղունք 'ի խինդ
Եւ սիրտք ձեր զի տրոփեն 'ի թինդ :
Ո՞ւմ հանդերձանքս անհատապարար
Ո՞ւմ և տաճարս այս վեհափառ
Ինուէր փառաց այս հանդերձի
Ձօնել զանունս յաղթականի :

Բ.

Խ. — Պատանիք վեհագիտակ
Դու փառաց առարս անդէտ ,
Զի՞ ըղձքեւ պարտին փայտնք
Շփոթեալ միտաց հանդէտ :
Չգիտե՞ս դու վեհ հայրդի
Նախանձոտ նախնի փառաց ,
Անյո՞ւշք են քեզ վաղեմի
Յիշատակք սեպուհ նախնեաց :

Գ.

Յ. — Չեն անյուշք ինձ նախնիք իմ սեպուհք ,
Չեն և գործք նոցին վեհք ինձ թաքունք .
Այլ այս ձեր հանդերձանք կրկնակի տան խնդա .
Յիշատակ հայրենի , թէ այլ ինչ ունի ասա :

digitised by A.R.A.R.@

Դ.

Խ. — Ա՜յս կրկին են առիթք
Մեր հրճուանաց, և տօնիս,
Այլ երկոքին են առինչք
Զոր տօնեմք մեք զարդիս:
Տօն է այսօր մեծազանց
Սուրբ Սահակայ Մեսրոպեայ,
Յիշատակաց արժան Հարց
Թշուառ ազգիս Թորգոմայ:
Այլ ընդ մեծիցն յիշատակ
Իմաստութիւն զուգի յոր,
Ընդ Սուրբ Մեսրոպայ և Սահակ
Տօնի իրաւամբ և հանճար:
Գիտէք անշուշտ զի ՚նոքա
Մեծ բարերարք են ազգիս,
Ի դպրական մարզ ընտիր
՚ւ ՚ի հոգեւոր արդասիս:
Ճարտարապետք իմաստունք
Ճարտարեցին զալթութայս՝
Քիրտն հեղեալ հոծ անդուլ
Ջահ վառեցին մշտալոյս:

Յիմաստութեան տաճարիս մարզին մանկունք Թորգոմայ
Ճոխանան միտք աստանօր սրբին և սիրտք ՚ի կրից.
Յիշատակաւ և ուսմամբ հայրենասէր գոլ գիտուն,
Գիտել անձին չափ և սպառք, սիրել և զազգ իւր սիրուն:

Ե.

Յ. — Բարէ՜ առիթ գերապանծ, ո՜հ մեծ պատճառք են տօնիս,
Կրկին չքնաղ առարկայք չքեղաշուք ակումբիս.
Երախտագէտ սրտից պարտք ՚ի յուշ ածել զնախնիս.
Եւ բանական մտաց անկ շուք տալ վսեմ իմաստից:
Իմաստութեան դուք ծնունդ, լերուք արժան հարց որդիք.
Որդիք անքին, սուրբք ՚ի վարս, և անբասիր կրօնիւք.
Օ՜ն զարդացէք հեզութեամբ յիմաստութեան յայս դպրատ,
Ուր հոգեկան ծաղկունք հոծ մշտափթիթ բուրեն աստ:
Մի՛ տայք, եղբարք իմ, տեղի, չարին գործել մուտ ՚ի ձեզ,
Ի բաց թողէք զկենցաղ ծոյլ, մի տայք ճարակ վատ կրից.
Կիրք խաւարեն զգոյն ջահ, թողեալ թափուր յամենից,
Յամենից իսկ բարութեանց, փառաց երկրի և երկնից:

Յ. } Այս զրկեն կիրք յամենից
Խ. } Զգոյշ լիցուք ՚ի չար կրից.

Մ. Վ. Մարկոսեան

digitised by A.R.A.R.@